

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Ազգի մը երջանկոտքիշնը՝ միաբան
ընկերութեան վրայ է .

Մարդս ընկերական ստեղծուած ըլլալուն համար՝ որ և իցէ մարդ բնականաբար միշտ ընկերութեան մը մէջ կը գտնուի . և սրովհետեւ ընկերութեան կապն է միաբանութիւնը , անոր համար առանց միաբանութեան ընկերութիւն չըլլար . և այս պատճառաւ որ և իցէ ընկերութիւն առաջ երթալու ճամբու մէջ է , քանի որ միաբանութեամբ աշխատելու հետ կ'ըլլայ : Իսկ երբոր ընկերութեան մէջէն միաբանութիւնը պակսի , ոչ միայն անօգուտ կ'ըլլայ այն ընկերութիւնը՝ այլ և անտանելի , ինչուան որ ցրուի կորսուի :

Եւ որովհետեւ մարդս ընկերական է՝ ի բնութենէ , ասկից կը հետեի որ միաբանութեան գաղափարն ալ մարդու բնական է . ուստի որ և իցէ մարդ ինչ վիճակի մէջ որ ըլլայ՝ պէտք է որ այս միաբանութեան գաղափարն ալ ունենայ , և անոր մէջ ՚ի մանկութենէ կըրթուի : Այնպէս որ մարդու բանականութիւնը բացուելուն պէս առաջին գաղափարը պիտի ըլլայ ճանչնալը իր ըստեղծողը՝ այսինքն Աստուծոյ գոյութիւնը և մարդու համար սահմանած վախճանը . և երկրորդ ճանչնալ իր սնանելուն և իր վախճանին հասնելուն վրայօք՝ միաբան ընկերութեան հարկաւորութիւնը . ինչպէս որ Աստուծոյ զմարդ ստեղծելու ատեն հարկ սեպեց ընկերական ընելու զինքը ըսելով՝ թէ « Ոչ է պարտ մարդոյդ միայն լինել » . որ է ըսել թէ մարդու սննդեանը հարկաւոր է ընկերութիւն : Ահա այսպէս մարդու ստեղծմանէն յայտ է՝ որ իր աղէկութիւնը , խաղաղ կեանքը և իր հանգիստ վախճանը կը գտնէ ՚ի միաբան ընկերութեան : Եւ աշխարհիս այսչափ հազարաւոր տարուան փորձն ալ կը ցուցնէ՝ որ մարդկան ամեն տեսակ չարեաց մէջ իյնալուն , և այսչափ անհնաւրին խռովութիւններուն պատճառն է

այս միաբան ընկերութեան պակասութիւնը : Եւ ասոր ներհակ՝ ամեն տեսակ աղէկութիւն և յաջողութիւն յառաջ եկած է և կու գայ ՚ի միաբան ընկերութենէ : Եւ այս միաբան ընկերութեան ոյժը այնպէս զօրաւոր և գործք առաջ տանող է , որ եթէ և ՚ի չարիս իսկ գըտնուի , չարիքն անով կը զօրանայ ու կործանիչ կ'ըլլայ մարդկութեան . որ և չարեաց դիտեալ վախճանն է : Եւ մարդիկ բնականաբար ճանչնալով այս միաբան ընկերութեան պէտքը և օգուտը , կը տեսնենք որ բան մը առաջ տանելու զաճնուն պէս՝ մէկէն ընկերութիւն մը կը կազմեն . և թէ որ կարենան միաբան վարուիլ , ամեն ուղաճնին առաջ կ'երթայ , և երբոր անմիաբանութիւն մտնայ մէջերնին , բան մը առաջ տանել չկարենալէն ետեւ , ընկերութեան անձինք իրարու կը թշնամանան՝ ու մէկմէկու վրասելու կը ջանան , թէ և առանձին ամեն մէկը խելացի և դատմունք ունեցող մարդիկ ըլլան :

Արդ առաջին տեսակ ընկերութիւնն է գերդաստանինը՝ աստուածագիր , որուն կարգաւորութիւնն է սահմանուած Աստուծոյ . որուն մէջ եթէ կենան ընկերութեան անձինք , կը վայելեն զայն խաղաղ կեանքը՝ զոր կը փափաքին , և վախճաններնուն կը հասնին : Բայց որովհետեւ շատ մարդիկ առաջնորդեալ ՚ի կրից առանձին գերդաստանաց միաբան ընկերութեան դէմ կը զինէին՝ ու կը խռովէին զգերդաստանները , ասոնց դէմը առնելու համար հարկաւորեցան մարդիկ հաստատել երկրորդ տեսակ ընկերութիւնը՝ որ կ'ըսուի քաղաքական . յորում շատ գերդաստաններ միաբանած մէկ մեծ ընկերութիւն մը կը ձևացնեն , որ կարենան իրենց վրայ յարձակողներուն դէմ դնել՝ ու իրենց գերդաստանաց ընկերութիւնները խաղաղ պահել . և այս տեսակ ընկերութիւնները աւելի տարածուելով սկսան իշխանութիւններն և թագաւորութիւններ : Երրորդ տեսակ ընկերութիւնն է այլ և այլ մարդկային պիտոյքը հողալու համար հնարածնին :

Արդ եթէ մարդիկ 'ի սկզբանէ հասկըցան միաբան ընկերութեան հարկաւորութիւնը, և ինչուան այսօր ետևէ են այսպիսի ընկերութիւններ հաստատելու, որպէս զի խաղաղ հանգիստ վայելք ունենան, հապա ինչու համար այսպէս ամեն տեսակ խռովութեանց և թշուառութեանց մէջ կը տագնապին. ո՞վ է արդեօք իրենց այսպիսի բարի յօժարութեան դէմ դնողն և արգիլողը: — Դրսէն ոչ ոք. այլ նոյն իսկ միաբան ընկերութիւն ընել ուզողները. իրենք կ'ուզեն, և իրենք արդեօք կ'ըլլան 'ի գործ դնելուն, և իրենք դարձեալ կը զարմանան՝ թէ ինչու չեն միաբանիր, ու զիրար կը մեղադրեն: Այս բանիս պատճառն է մարդկային բնութեան խեղճութիւնը: Ամեն մարդուն դատմունքը իր խելքին համեմատ է, ըստ չափու իրեն խելացը՝ պակաս կամ աւելի, բայց և ոչ մէկունը կատարեալ. բաց 'ի անոնց մէ՛ որոնց որ Աստուած կը հաղորդէ առանձին շնորհօք՝ կատարեալ դատումն: Եւ սակայն որովհետև ամենքն ալ դատմունք ունին, որչափ և պակասաւոր ըլլայ այն, իւրաքանչիւր ոք իր պակասաւոր դատմանը մէջ ունի բնական ինքնահաւանութիւն, և անոր հետևանք պատուասիրութիւն. և ասոնք փոխանակ դատմանը համեմատ ըլլալու, ընդհակառակն՝ որչափ որ մէկուն դատումը պակաս է, այնչափ աւելի կ'ըլլայ ինքնահաւանութիւնը և պատուասիրութիւնը: Եւ զի մարդուս դատումն իր կշիռն է, անոր համար ամեն տեսածը, լսածը և մտածածը կը կշռէ իր դատմամբը, անկէ դուրս կշիռ չճանչնար. և որովհետև ըստ պակասելոյ դատման՝ անձնասիրութիւնը և պատուասիրութիւնը աւելի են, տես ուրեմն թէ ինչ աստիճանի սխալ կ'ըլլան դատման կըշռոյն պահանջմունքը:

Հիմա օրինակի համար ենթադրենք որ այլ և այլ մարդիկ ճանչնալով միաբան ընկերութեան հարկաւորութիւնը օգտակար բան մը առաջ տանելու համար՝ ժողովին խորհրդով գործելու, ամենքը զինեալ իրենց դատման կշիռ-

քով, պատրաստուած անձնասիրութեամբ և պատուասիրութեամբ՝ օգտակար խորհուրդներ տալու, և իւրաքանչիւր ոք միտքը դրած իր դատմանը միաբանեցնելու զուրիշները. արդ խորհուրդը կ'առաջարկուի, և ժողովականք իրենց անձնասիրութեամբ և պատուասիրութեամբ զարգարուած՝ դատման կշռոյն մէջ կ'առնեն զայն խորհուրդը. և ահա չափերը կը գտնեն իրարմէ շատ զանազան. և ամեն մէկը կը սկսի ցուցնել իր չափոյն ուղղութիւնը և կը ջանայ այլոց ընդունելի ընել տալ. թէպէտ ամենքն ալ միաբանասէր, բայց չափերուն տարբերութիւնը պատճառ կ'ըլլայ յուզմանց և անմիաբանութեան, որով ամենքն ալ կը հարկաւորին չմիաբանելու և զիրար մեղադրելու իրրև անմիաբան. ամեն մէկերնին մտքերնին դրած թէ իրենց դատման կշռոյն չափն է շիտակը՝ և անոր պէտք է որ մէկաշնորհ հետևին, ան խորհրդոյն վրայ միաբանին: Այս է պատճառն որ առանձին որ և իցէ ազգիս յառաջադիմութեան փափաքող անձի մը հետ որ խօսիս, կը տեսնես որ ազգին խեղճութեան վրայ կու լայ՝ պատճառ բերելով անոր անմիաբան բնութիւնը. միտքը դրած՝ որ ինքը պատրաստ է միաբանութեամբ գործելու, բայց ուրիշներն իրեն պէս չեն մտածեր, չեն քններ, ու ընտրելի աղէկ խորհրդոյն իրեն պէս չեն հետևիր, այլ առանձին իրենց մտածութեանը վրայ պնդած կը յամառին: Այսպէս եթէ ընկերութեան մը անձինք չկարենան միաբանիլ ու առաջ տանել ընկերութիւննին, գնա առանձին կանչէ ընկերներէն ամեն մէկը ու հարցու. ամենէն ալ զնոյն գանգատը կը լսես ընկերութեան անձանց վրայ: Արդ՝ ընկերութեան մը անգամները, ազգի մը կառավարութիւնը առաջ տանող անձինք՝ քանի որ չգիտնան այս դատմանց տարբերութեանց պատճառները և զգուշութեամբ առջևը առնելու և միաբան գործելու ճամբան, անհնարին է միաբանութեամբ գործք առաջ տանիլը:

Կը շարունակուի: